



ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ*)

ՊՈՂՈՍԻ ԵՐՐՈՐԴ ԱՌԱՔՅԻԱԿԱՆ ՔԱՐՈՉՉԱԿՔԸ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆԸ



նտիրքում որոշ ժամանակ դա-
դար առնելուց հետո Պողոսը
նորից այցելում է հավատաց-
յալներին և մի պտույտ կա-
տարելով Գաղատիայում ու Փլուզիայում,
ամենուրեք սրտապնդում ու մխիթարում է
նրանց: Նորից Եփեսոս դառնալով նա շարու-
նակում է փոքր քարոզությունը մեծ հաջողու-
թյամբ. երկու տարի այստեղ մնալու հետե-
վանքով նրա համբավը տարածվում է շրջա-
կա վայրերի հրեաների ու հեթանոսների մեջ:
Եվ այսպիսով Աստծո խոսքն աճում ու զո-
րանում էր շնորհիվ Պողոս առաքյալի:

Այնուհետև նա որոշում է շրջագայության
գնալ Մակեդոնիա, Աքաիա և ապա վերա-
դառնալ Երուսաղեմ ու այնտեղից էլ ուղևոր-
վել Հռոմ: Սակայն ճանապարհների անապա-
հովության պատճառով անժամանակ մնում է
Եփեսոսում: Այստեղի արծաթագործները, որ
իրենց քաղաքի Արտեմիս կուռքի նմանու-
թյամբ մեհյանների համար արծաթե փոքրիկ
կուռքեր էին պատրաստում, տեսնում են, որ
առաքյալի քարոզած վարդապետությունը
հարվածում է իրենց տնտեսական շահերին
և քրիստոնեության հաղթանակի դեպքում ի-
րենք անգործ պիտի մնան, ուստի ամբոխին
գրգռում են նոր կրոնի քարոզիչների դեմ ու
ահագին աղմուկ բարձրացնելով Պողոսի
կողմնակիցներին տանում են թատրոնի
շենքը, նրանց այնտեղ դատելու համար:
Պողոսը ցանկանում է, որ փոքր էլ գնա
թատրոն և խոսի գրգռված ժողովրդի հետ,
բայց աշակերտները նրան ետ են պահում
այդ մտքից: Քաղաքի իշխանավորներին հա-
ջողվում է գրգռված ամբոխին հանդարտաց-
նել, իսկ առաքյալը ստիպված է լինում քա-
ղաքից հեռանալ ու Մակեդոնիա գնալ:

Այստեղ էլ շրջագայելուց ու հավատաց-

յալներին մխիթարելուց հետո նա անցնում
է Հելլադա, ուր մնում է Կորնթ ամիս և տե-
ղական հրեաների կողմից դավադրության
հանդիպելով կրկին անցնում է Մակեդոնիա:
Մակեդոնիայից նրա ամենամոտիկ գործա-
կիցներն անցնում են Տրովադա ու սպասում
առաքյալին, որը Փիլիպից գալով հանդի-
պում է նրանց այնտեղ: Ապա մի շարք քա-
ղաքներ այցելելուց հետո հասնում է Մեյե-
սոն: Առաքյալը մտադրություն ունի այս-
տեղից էլ նավել Եփեսոսի մոտով, հետո շա-
րունակել ծովային ճանապարհորդություն
այն հաշվով, որ Պենտեկոստի տոնին լինի
Երուսաղեմում: Մեյեսոնից նա մարդ է ու-
ղարկում Եփեսոս՝ այնտեղի երեցներին իր
մոտ կանչելու: Երբ երեցները գալիս են, ա-
ռաքյալը վերջին անգամ շատ զգացված խո-
սում է նրանց հետ և պատվերներ տալիս
նորադարձ հավատացյալների համար: Հի-
շեցնում է, թե Ասիա դալուց ի վեր որչափ
երկար է մնացել ինքն Եփեսոսում ու շարու-
նակ մխիթարել, ուսուցել նրանց Աստծու բո-
լոր պատվիրանները և Քրիստոսի քարոզած
ապաշխարությունն ու կենդանի հավատը:

— Եվ այժմ ես կապյալ հոգով գնում եմ
Երուսաղեմ, — ասում է առաքյալը, — թե
ի՞նչ է պատահելու ինձ հետ, չգիտեմ, բայց
Ս. Հոգին վկայում է և ասում, թե կապանք-
ներն ու նեղությունները շարունակ ինձ հետ
պիտի լինեն: Ես պատրաստ եմ ինձ վիճակ-
ված ճանապարհն ուրախությամբ գնալ և
վկա լինել Հիսուս Քրիստոսին ու նրա քարո-
զած ավետարանին: Եվ այժմ ես գիտեմ, որ
դուք այլևս իմ երեսը չեք տեսնի: Զգուշ-
կացեք և անարատության պահեցեք քարո-
զածներս, և հովիվեցեք Տիրոջ կողմից ձեզ
վստահված ժողովրդին, որովհետև դիտեմ,
որ իմ մեկնելուց հետո համիշտակող գալիք
կգան, որոնք չեն խնայի ձեր հոտին: Զեր
միջից էլ մարդիկ դուրս կգան, որոնք թյուր
բաներ կքարոզեն և կաշխատեն մեր աշա-

*) Սկիզբը տես «ԶՄԻԱՄԻՆ», Օգոստոս—սեպտեմ-
բեր—հոկտեմբեր, 1946 թ.:

կերտներին իրենց կողմը գրավել: Այդ պատճառով արթուն կացեք, և հիշեցեք, որ երեք տարի գիշեր-ցերեկ արտասովելով չեմ դադարել խրատել ձեզանից յուրաքանչյուրին մեկիկ-մեկիկ: Արծաթ կամ ոսկի՝ կամ հագուստ ոչ մեկիցդ չեմ խնդրել: Դուք ինքներդ գիտեք, որ իմ պետքերը, ինչպես և ինձ հետ եղողներինը, իմ այս ձեռքերն էին հոգում: Նա ամեն ինչ ցույց տվի ձեզ, թե ինչպես պետք է վաստակել ու դարձանել հիվանդներին:

Այս խոսքերից հետո ամենքը ծռենր են դնում և աղոթք անում. բոլորն էլ լալով փարթում են առաքյալի պարանոցին ու համբուրում նրան: Մանավանդ մորմոթվում են այն խոսքերից, որ այլևս չեն տեսնելու նրան:

Այա հուզված ճանապարհ են դնում նաև, որը շուտով առաքյալին բերում, հասցնում է Փյունիկիայի Տյուրոս քաղաքը,

այստեղից էլ Պտղեմալիդա, իսկ հետո Պաղեստինի կեսարիան: Այստեղ Երուսաղեմից Ագաբոս անունով մի մարգարե է գալիս, որը ներշնչված Ս. Հոգուց, Պողոս առաքյալին խորհուրդ է տալիս Երուսաղեմ չգնալ և վերցնելով առաքյալի գոտին, նրանով կապում է իր ձեռքերն ու ոտներն և ասում. «Այսպես կկապեն հրեաները Երուսաղեմում այս գոտու տիրոջը և կմատնեն հեթանոսների ձեռքը»: Իսկ առաքյալը պատասխանում է. «Ի՞նչ եք անում, ի՞նչու եք լաց լինում ու ճմլեցնում իմ սիրտը, ես պատրաստ եմ Երուսաղեմում ոչ միայն կապվել, այլև մեռնել Տեր Հիսուս Քրիստոսի անվան համար»: Տեսնելով այդ առաքյալը չի համաձայնում, դադարում են նրան Երուսաղեմ գնալու մտքից ետկաշեղու: Երուսաղեմ մտնելուց ուրախ ընդունելով թյուրոսից, են գտնում հավատացյալների կողմից:

ՊՈԼՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԶԵՐԲԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՐՈՒՍԱԼԵՄՈՒՄ

Պողոս առաքյալը շտապում է տեսնել Հակոբոս առաքյալին, որի մոտ հավաքվում են նաև Երուսաղեմի Կեղեցիները: Ողջունելով նրանց, առաքյալը մանրամասն պատմում է իր առաքելական շրջագայության և հեթանոսների մոտ ունեցած հաջողության մասին: Նրանք այս ամենը լսելով փառք են տալիս Աստծուն և Պողոս առաքյալին էլ հայտնում են, որ Երուսաղեմում բյուրավոր հավատացյալ հրեաներ կան, որոնք միաժամանակ նախաձեռնություն են մղում սիսական օրենքների պահպանմանը: Նրանք լսել են, որ իբր թե Պոլոսը հեթանոսների մեջ ապրող հրեաներին քարոզում է, որ պետք Մովսեսի դրած օրենքները չկատարեն և այդ փակ պատճառով կատաղած են նրա դեմ: Պողոսին խորհուրդ են տալիս մի քանի ծխական գործողություններ կատարել և ապա տաճար հաճախել: Պողոս առաքյալն այդպես էլ վարվում է: Սակայն մի օր, Ասիայի հրեաները նրան տաճարում տեսնելով, ահագին ամբոխ են հավաքում նրա շուրջը ու առաքյալին էլ բռնելով աղաղակում. «Ով իսրայելացի՞ք, օգնեցե՛ք, այս մարդն է, որ հուլառակ ժողովրդյան ու օրենքների, ամենքին ու ամենուրեք ուսուցանում է և մինչև իսկ հեթանոսներին տաճարը մտցնելով պղծեց, սուրբ վայրը»:

Նրանք առաջուց քաղաքում նրա հետ տեսել էին Տրոփիմոս: Սփեսացուն ու կարծում էին, թե առաքյալը նրան էլ է ներս տարել տաճար: Ժողովուրդը Պողոս առաքյալին տաճարից դուրս է քշում. տաճարի դռները

փակվում են և զազազած ամբոխը պատրաստվում է տեղն ու տեղը սպանել առաքյալին:

Լուր է հասնում հազարապետին, որ ամբողջ Երուսաղեմը խռովության մեջ է: Սա զորք ու հարյուրապետներ է վերցնում և գնում ամբոխի վրա, որը տեսնելով հազարապետին դադարում է Պողոս առաքյալին ծեծել: Հազարապետը մոտ գալով հրամայում է ձերբակալել Պողոսին ու կրկնակի շղթաներով կապել: Առաքյալը խնդրում է հազարապետին, թույլ տալ իրեն ժողովրդի հետ խոսելու երբ իրավունք է տրվում, նա բարձրանում է տաճարի աստիճանների վրա, ձեռքը պարզում դեպի ժողովուրդը ու իբր լուռությամբ է տիրում, սկսում է փոսել Եբրայեցիներին. «Ով եղբայրներ և հայրեր, լսեցե՛ք այժմ ինձ, թե ինչ պիտի ասեմ ձեզ: Ես մի հրեա եմ, ծնված Կիլիկիայի Տարսոս քաղաքում, ուսում ստացած նույն քաղաքում Դամադեիլի մոտ և դաստիարակված հայրենի օրենքների ճշմարտության ոգու համաձայն. ես նախաձեռնություն էի Աստծու համար, ինչպես դուք բոլորդ: Եվ ապա պատմում է Դամասկոսի ճանապարհին իր հետ պատահածը ու այնուհետև շարունակում է. «Երբ վերադարձա Երուսաղեմ, տաճար մտա ու աղոթում էի, ես հոգեզմայլ վիճակում տեսա նրան, որ ասում էր ինձ. «Շտապի՛ր, դուրս արի Երուսաղեմից, որովհետև քո վկայությունն իմ մասին չեն ընդունելու: Ես պատասխանեցի, թե նրանց հայտնի է, որ ես էի բանտարկում ու ծեծում քո հավա-

տացյալներին, և երբ թափվում էր քո վկա Ստեփաննոսի արյունը, ես էի դարձյալ, որ կամակից էի նրա սպանմանը: Իսկ Տեղին ինձ ասում էր. «Բնա՛, որովհետև քեզ հետավոր հեթանոսների մոտ պիտի ուղարկեմ»:

Ժողովուրդը, որ մինչ այդ լուռ լսում էր, սկսեց աղաղակել հազարապետին դիմելով. «Կերպացու երկրից այդ տեսակ մարդուն, որովհետև աշխարհին չպետք է ապրի»: Աղաղակելու հետ նրանք իրենց շորերն էին նետում և օդի մեջ փռել ցանում: Զինվորները մոտենում ու փոկերով կապում են նրան: Պողոս առաքյալը իր մոտ կանգնած հարյուրապետի միջոցով իմացնում է իր Հռոմի քաղաքացի լինելը: Հազարապետը լսելով, որ Պողոս առաքյալը արդարև Հռոմի քաղաքացի է, այն էլ ի ծնե, կարգադրում է իսկույն կապանքներն արձակել և չծեծել:

Բայց և այնպես հազարապետն ուզում էր իմանալ, թե փնչու են շարախոսում հրեաները նրա դեմ. դրա համար կանչել է տալիս քահանայապետին, ատյան կազմում ու Պողոսին էլ կանգնեցնում նրա առաջ: Առաքյալը ատյանին դիմելով ասում է. «Ներայայտի՛ր, ես բոլորովին ուղիղ մտքով ընթացել եմ իմ Աստծու առաջ մինչև այսօր»: Այդ պահին Ասանիա քահանայապետը հրամայում է սպասավորներին նրա բերանը հարվածել: Պողոս առաքյալը ցատկով լցվելով ասում է. «Հարվածելու է քեզ Աստված, ծեփված պատ և դո՛ւ ես նստել ու դատում ինձ օրենքի համաձայն ու առանց օրենքի էլ հարվածել հրամայում»:

Առաքյալը նկատելով որ ատյանի մի կողմը սադուկեցիներն են, իսկ մյուս կողմը փարիսեցիները, աղաղակում է. «Ներայայտե՛ր, ես փարիսեցի եմ, փարիսեցու որդի և առ Աստված ունեցածս հույսի ու մեղեցիների հարությունը հավատալուս համար դատվում եմ ահա»: Այս ասելուց իսկույն հերձված է ընկնում սադուկեցիների ու փարիսեցիների մեջ. սադուկեցիները չէին ընդունում հարություն, հրեշտակ ու հոգի, իսկ փարիսեցիներն ընդունում էին դրանք: Փարիսեցիներից ոմանք ոտքի կանգնելով ասում են, որ մեղադրյալի մոտ ոչ մի շարունակ չեն տեսնում, բացի այն, որ ինքը հոգին կամ հրեշտակն է խոսում նրա բերնով:

Մյուս օրը քառասուն հրեա ժողով են աւելում և որոշում Պողոս առաքյալին սպանել: Այս նենգությունն իմանում է առաքյալի քննորդին ու հայտնում հազարապետին: Երբ հազարապետը հրեաների այս շարդիտավորությունն իմանում է, կարգադրում է, որ բազմաթիվ հեծյալ զինվորներով գիշերը առաքյալին տանեն Պաղեստինի Կեսարիա

քաղաքը՝ Փեղիքս դատավորի մոտ: Միաժամանակ մի գրություն էլ է ուղարկում Փեղիքսին, համառոտակի հաղորդելով դավադրության և Պողոսի Հռոմի քաղաքացի լինելու մասին: Պահապան-ուղեկցող զինվորները առաքյալին հանձնում են Փեղիքսին, որը կարգավով գրությունը կարգադրում է մինչև շարախոսների գալը պահել նրան Հերովդի սպարանքում: Հինգ օր հետո քահանայապետը մի քանի ծեղերի ու ճարտարախոս մեղադրող Տերտյուղոսի հետ գալիս են Կեսարիա և ներկայանում Փեղիքսին: Սա կանչել է տալիս առաքյալին ու հրեաներին առաջարկում իրենց մեղադրանքն ասել: Տերտյուղոսը նախ մի քանի կեղծավոր խոսքերով գովում է Փեղիքսին, որպես դատավորի, ապա հայտնում է, որ Պողոսը խռովություն է սերմանում ամբողջ աշխարհի հրեաների մեջ՝ հանդիսանալով նազովրացիացի հերձվածի առաջնորդը: Երբ դատավորը խոսքը տալիս է Պողոս առաքյալին, վերջինս սկսում է այսպես. «Ճասներկու օր է, ինչ եկել եմ Երուսաղեմ երկրպագություն տալու Ս. տաճարին, ոչ ոք չի տեսել, որ մեկի հետ խոսած լինեմ կամ ժողով արած, այնպես որ ոչ ոքի չեն կարող վկա կանգնեցնել, ինչի համար որ ինձ մեղադրում են: Բայց մի բան հաստատապես հայտնում եմ, ինչ դրանք հերձված են անլանում, ես ջերմորեն սրաշտում եմ իմ Աստծուն, հավատարմով այն բոլորին, ինչ որ օրենքներում և մարգարեություններում գրված է»:

Փեղիքսը դատավարությունը հետաձգում է մինչև հազարապետի Կեսարիա գալը, իսկ առաքյալի համար կարգադրում է որոշ հարմարություններ տալ ու պահել: Մի քանի օրից հետո Փեղիքսը նորից կանչել է տալիս առաքյալին, որն սկսում է նրան քարոզել Քրիստոսի մասին: Երբ առաքյալը սկսում է խոսել արդարության, ժողկարության և հանդերձյալ դատաստանի մասին, Փեղիքսի սիրտը փրկուղ է ընկնում և նա ասում է. «Առ այժմ զնա, երբ առիթ լինի, վկանչեմ քեզ»: Անուհետև հաճախ էր կանչում Պողոս առաքյալին ու խոսում հետը:

Այսպես անցնում է երկու տարի: Փեղիքսը փոխվում է և փոխարենը գալիս է Փեստոս անունով մեկը:

Փեստոսն իշխանության գլուխ անցնելուց հետո մի քանի օրով գնում է Երուսաղեմ: Քահանայապետն ու մեծամեծները հիշեցնում են Փեստոսին Պողոսի մասին և խնդրում դատը Երուսաղեմում կատարել, որպեսզի բերելուց ճանապարհին սպանեն նրան. սակայն Փեստոսը չի համաձայնում և

առաջարկում է իր հետ դնալ Կեսարիա ու աշխտեղ ամբաստանել առաքյալին:

Կեսարիա վերադառնալով Փեստոսն աստ-
յան է բաց անում և իր հետ եկած հրեաներին
առաջարկում իրենց մեղադրանքներն ասել:
Սրանք շատ ծանր հանցանքներ են բարդում
Պողոս առաքյալի վրա, բայց և ոչ մեկը չեն
կարողանում ապացուցել, որովհետև առաք-
յալը մեկ առ մեկ հերքում է: Սակայն Փես-
տոսը հրեաներին դուր գալու համար առա-
ջարկում է առաքյալին Նրուաղեմ դնալ ու
այնտեղ դատվել իր ներկայությամբ: Պողո-
սը զգալով, որ այս առաջարկի տակ մի նեն-
գություն կա թաղնված, պատասխանում է.
«Կայսեր ատյանում եմ գտնվում, որտեղ և
ես պետք է դատվեմ. հրեաների համար ես
ամենևին վնասակար չեմ, ինչպես դու էլ
քաջ գիտես, իսկ եթե վնասակար եմ ու մահ-
վան արժանի բան եմ գործել, չեմ վախենում
մեռնելուց. իսկ եթե ոչ մի հանցանք չկա,
որի համար դրանք ամբաստանում են ինձ,
ապա ոչ ոք էլ չի կարող ինձ դրանց ձեռքը
մատնել: Բողոքում եմ կայսեր անունով:
Փեստոսը խոսելով իր խորհրդակցի հետ
պատասխանում է. «Քանի կայսեր անունով
բողոքեցիր, կայսեր մոտ էլ կերթաս»: (Հոռ-
մենակն օրենքով ամեն քաղաքացի դատա-
րանից դժգոհ մնալուց իրավունք ունի կայ-
սեր անունով բողոքելու. այդ դեպքում նրան
անպայման ուղարկում էին Հռոմ, կայսեր
մոտ դատվելու):

Մի քանի օր անց Ագրիպաս թագավորն ու
Բերինիկեն գալիս են Կեսարիա Փեստոսին
այցելության: Փեստոսը սրանց պատմում է,
թե ինչպես հրեաները վամեցել են սպանել
Պողոս առաքյալին, բայց ինքն ազատել ու
պահում է կապյալ փնտրելով իր մոտ: Ագ-
րիպասը ցանկություն է հայտնում առաքյա-
լին տեսնելու: Մյուս օրը Ագրիպասը, Բե-
րինիկեն և ուրիշ շատ երևելի անձինք հավաք-
վում են Փեստոսի ապարանքում: Փեստոսը
առաքյալին բերել տալով կանգնեցնում է
ատյանում և դիմելով հանդիսականներին ա-
սում է. «Արքա՛ Ագրիպաս, և բոլոր մար-
դիկ, որ մեզ հետ եք, տեսնո՞ւմ եք սրան,
ամբողջ հրեա ժողովուրդն ամբաստանում և
աղաղակում էր, թե նա չպետք է ապրի,
բայց ես գտա, որ սա մահվան արժանի ոչ
մի բան չի գործել. սակայն նա ինքը բողո-

քեց կայսեր անունով ու ես էլ մտադիր եմ
ուղարկել, բայց որևէ ստույգ բան գրել իմ
տիրոջը՝ չեմ կարող, այդ պատճառով էլ քե-
րի սրան այստեղ ձեռ առաջ նորից քննելու,
որպեսզի կարողանամ մի բան գրել, թե Հ
անհամար է ինձ համար մի կապյալ ու-
ղարկել ու ոչ մի վնասակար բան չնշել նրա
մասին:

Ագրիպասը դառնալով առաքյալին, ասում
է. «Հրամայված է քեզ, քո մասին խոսել»: Պողոս
առաքյալը ձեռքը շարժելով պատաս-
խանում է. «Հրեաների իմ դեմ հարուցած
բոլոր ամբաստանությունների համար, ար-
քա Ագրիպա, երանելի եմ համարում ինձ, որ
այսօր քո առաջ պատասխան եմ տալու,
մանավանդ որ գիտակ էլ ես բոլոր կրոննե-
րին և հրեաների ունեցած ակնկալություն-
ներին. ուստի խնդրում եմ երկայնամտու-
թյամբ լսել ինձ: Իմ կյանքի մասին տեղյակ
եմ բոլոր հրեաները: Ես Դամասկոսում, Ն-
րուաղեմում, Հրեաստանի բոլոր դավառնե-
րում ու հեթանոսների մոտ քարոզեցի զղջալ
և դառնալ դեպի կենդանի Աստված: Ես ու-
րիշ բան չեմ խոսել, քան այն ինչ որ մար-
գարեններն ու Մովսեսն են ասել զալիք դեպ-
քերի մասին, թե չարչարանքներ է կրելու
Քրիստոսը, թե մեռելներից հարություն ա-
նածներից առաջինը լույս է ավետելու հրեա
ժողովրդին ու հեթանոսներին»:

Առաքյալի այս պատասխանից հետո Փես-
տոսը բարձրաձայն ասում է. «Շատ կարդա-
լուց խենթացել ես, Պողոս» իսկ առաքյալը
պատասխանում է. «Զեմ խենթացել, քաջ
Փեստոս, այլ հեզություն ու ճշմարտության
խոսքեր եմ ասում, այս բաներին տեղյակ է
արքան էլ: Հավատո՞ւմ ես, արքա՛ Ագրիպա,
մարգարեններին. գիտեմ, որ հավատում ես:
Ագրիպասը դառնալով նրան ասում է. «Քիչ
է մոռում, որ ինձ էլ քրիստոնյա դարձնես»:
Պողոսը պատասխանում է «Կիսկրիկի Աստու-
ծուց, որ դուք ամենքդ, տր լսում եք ինձ
այսօր, լիճեիք այնպես, ինչպես ես եմ, բայց
առանց իմ կապանքների»:

Արքան, Բերինիկեն, դատավորը և մյուս-
ները հեռացան այն կարծիքը կազմելով, որ
նա մահվան կամ կապանքների արժանի ոչ
մի բան չի գործել: Ագրիպասը Փեստոսին
ասաց. «Արձակել էր պետք այս մարդուն,
եթե կայսեր անունով բողոքած չլիներ»:

ՊՈՂՈՍ ԱՌԱՔՅԱԼԻ ԱՆԱԶԱՏ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ՀԻՌՍ

Փեստոսի կարգադրությամբ առաքյալին
ուրիշ կալանավորների հետ միասին նալ են
նստեցնում և հրամայում տանել Հռոմ: Ծա-
նապարհին ծովի վրա շատ ծանր փորձանք-

ների են հանդիպում, ուղեկիցները մինչև
իսկ հուսահատությունով դուռն են հասնում,
բայց Պողոս առաքյալը բոլորին հուսադրում
էր դիմաճալ, չընկճվել, այլ առ Աստված ա-

պավինելով, նրանից փրկություն սպասելու
Շատ արկածներից հետո վերջապես նա վր
կալանավորներով հանդերձ հասնում է Հոռո-
մի ամենամոտ նավահանգիստը: Այստեղից
էլ ցամաքի վրայով ուղևորվում են Հոռոմ:
Ուղեկցող հարյուրապետը Պողոս առաքյալին
մի պահապան ղինվորի հետ թույլ է տալիս
առանձին ապրելու: Առաքյալը տեսակցու-
թյուն է ունենում Հոռոմի հրեաների հետ և
նրանց իրազեկ դարձնում, թե ինչ պայմաննե-
րում ինքը ստիպված է եղել կայսեր անուանով
բողոքել ու Հոռոմ բերվել: Դրանից հետո
հրեաները հաճախ էին գալիս նրա քարոզու-
թյունները Աստծու արքայության և Քրիստո-
սի մասին լսելու: Վերջում հրեաների մի
մասը հեռանում է նրանից, չընդունելով նրա
քարոզությունները: Երկու ամբողջ տարի
Պողոս առաքյալը մնում է Հոռոմում, ապրում
իր ձեռքի աշխատանքով և քարոզում Աստծու
արքայության ու Քրիստոսի մասին:

Ահա այն ամենը, ինչ մենք կարող ենք ի-
մանալ Գործք Առաքելոցից Պողոս Առաքյալի
մասին: Այնուհետև պատմությունից հայտնի
է, որ նա 66 թվին նահատակվել է Հոռոմում,
ներոն կայսեր ժամանակ, երբ ընդհանուր
հալածանք է սկսվում քրիստոնյաների դեմ:

Մնված փարիսեցի, դաստիարակված մով-
սիսական օրենքների ոգով, մոլի նախանձա-
խնդիր հայրենի սովորությունների ու ա-
վանդությունների, քրիստոնյա հավատաց-

յալների հալածիչ և աշպես... մինչև Դա-
մասկոս: Դամասկոսի շրջադարձը միանգա-
մայն հեղաշրջեց այս փերին աստիճանի
զգալուն ու ուժեղ անձնավորության ներքին
հոգեկան աշխարհը: Պողոսը հոգու աչքերով
տեսավ Նրան, ում հալածում էր, զինաթափ
եղավ Նրա կերպարի առաջ, ընդունեց, հա-
վատաց Նրան, փարվեց հոգով, սրտով և
երգով: Նրա քարոզած սկզբունքների ու գա-
ղափարների քարոզիչը դառնալ ոչ միայն իր
հայրենակիցների, այլ և հեթանոսների մոտ:
Դամասկոսից էլ նա սկսեց քրիստոնեական
նոր ուսմունքը քարոզել ամենուրեք, ինչպես
տեսանք նրա երեք անգամ կատարած առա-
քելական քարոզչական ճանապարհորդու-
թյունների ժամանակ: Շնորհիվ իր անսպառ
եռանդի ու անբասիր անձնական օրինակի,
որով համարվում էր բոլորին, նա շտեմնված
հաջողություն ունեցավ. բազմաթիվ հա-
մայնքներ կազմեց, անթիվ աշակերտներ ու-
նեցավ, որոնք շարունակեցին նրա գործը
թե՛ նրա կենդանության օրով և թե՛ նահա-
տակությունից հետո:

Պողոս առաքյալն իր բեղմնավոր գործու-
նեությունը շնորհիվ քրիստոնյա աշխարհի ա-
մենամեծ արքերից մեկը դարձավ: Մեր եկե-
ղեցին նրա հիշատակը տոնում է տարեկան
երկու անգամ — դեկտեմբերի վերջերին և
ամառը՝ տասներկու առաքյալների տոնի հետ
միասին:

